

ԼՈՒՍԻՆ ՂԱԶԱՐՅԱՆ

ԵՍ ՔՈՆԸ ՉԵՂԱ

Բանաստեղծություններ

ԵՐԵՎԱՆ



2017

ՀՏԴ 821.19-1 Ղազարյան
ԳՄԴ 84 (5Հ)-5
Ղ 158

**ԸՆԴԻՆԱԿՆ ԻՐ ՇՆՈՐԸԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆ Է ԸՄՅՏՆՈՒՄ
ԸՄՐՈՒԹ ԲՈԳԱՐՅԱՆԻՆ
ԳՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ԾԱԽՍԵՐԸ ԸՈԳԱԼՈՒ ԸՄՄԱՐ**

Ղազարյան Լուսին
Ղ 158 Ես քոնը չեղա: Բանաստեղծություններ / Լ.
Ղազարյան. - Եր.: Արմավ, 2017. - 96 էջ:

Գրքում ներկայացված են բանաստեղծուհու տարբեր տարի-
ների բանաստեղծությունները, որոնցում հեղինակն իր անկեղծ
ապրումներն է կիսում ընթերցողի հետ:

ՀՏԴ 821.19-1 Ղազարյան
ԳՄԴ 84 (5Հ)-5

ISBN 978-9939-863-65-8

© Ղազարյան Լուսին, 2017
© «Արմավ», 2017



ԱՊՐՎԱԾ ՏՈՂ

Լուսին Ղազարյանի գրական մուտքը կայացավ «Փշրված սիրտ» (Երևան, Վան Արյան, 2001) բանաստեղծությունների փոքրիկ ժողովածուով: Գրական միջավայրում անմիջապես նկատվեց նրա մաքուր ապրումներով, թարմ պատկերներով նրբազգաց բանաստեղծությունները: Այնուհետև Լուսինը երկար տարիներ զբաղվեց լրագրությամբ և միայն 15 տարի անց լույս ընծայեց իր բանաստեղծությունների երկրորդ՝ «Սեր թևերս» (Երևան, Վան Արյան, 2016) ժողովածուն: Սույն՝ «Ես քոնը չեղա» բանաստեղծությունների ժողովածուն ներառում է թե՛ առաջին և թե՛ երկրորդ գրքերից, ինչպես նաև նոր բանաստեղծություններ:

Անշուշտ, լրագրողական մասնագիտությունն օգնել է հեղինակին տեսնել այսօրը և այն վառ կերպով արտահայտել իր բանաստեղծություններում:

Ինչն է հետաքրքիր. վերջին տարիներին առկա է այսպես ասած գրականության կազմաքանդման միտումը, որն հատկապես տեսանելի է բանաստեղծության համապատկերում: Պոեզիայից դուրս է մղվում քնարականությունը, երաժշտականությունը, և քիչ հեղինակներ ու գրողներ կան, որ բանաստեղծությանը վերադարձնում են իր նախնական նշանակությունը՝ այսպես ասած՝ խոսքի մեղեդայնությունն ու ծիսականությունը: Եվ պատահական չէ, որ Լուսին Ղազարյանի ստեղծած պատկերներն անընդհատ տեսլանալու հատկություն ունեն. բանաստեղծության այս բնույթն է կարծես գրողը որդեգրել և ձգտում է նման դժվար ճանապարհով անցնել, քանզի զարմացնելու ճիգով բյուր գրքեր կարելի է գրել:

Ապրված տողով բանաստեղծ է Լուսին Ղազարյանը: Պատկերավորման համակարգը նրա հիմնական զինանոցն է: Հետաքրքիր պատկերները զուգորդում են մեկը մյուսին: Պատկերները կառուցվում են կամ տող-պատկերների անցումներով, կամ էլ մի քանի տեսլապատկերների ամբողջական համադրումով:

Տող-պատկերները Լուսին Ղազարյանի պոեզիայում ունեն նորովի, անսպասելի կառուցումներ. «Քամին վալան է պարում իր



հնարած», «Հայացքդ՝ քնձոռու մի ձի», «Երեկոն թավալվեց անկողնում», «Երեկոյի հագին ծերմակ շոր է», և այլ նման պատկերների միջոցով հեղինակը տրամադրություն է ստեղծում, և ընթերցողին հնարավորություն տալիս մի քանի ենթամաստներ գտնել դրանց մեջ:

Տեսլապատկերների ամբողջական համադրման միջոցով Լուսին Ղազարյանը ավելի ընդգրկուն պատկերներ է ստեղծում, գեղարվեստական տարածություններ, որոնք արդեն դրամատիզմի շեշտ են կրում իրենց վրա. «Ափովել եմ ծովի ափին՝ // Համր համբերությամբ, // Անձայն համառությամբ // Ափերին ցրվել // Ու դարձել եմ ավազ, // Ու երգում եմ հիմա // Երգս ավազային...»:

Դրամատիզմը երբեմն հասնում է այնպիսի շիկացման, որ հեղինակի կողմից պատկերների համադրումը գյուտի արժեք են ստանում.

*Երբ հավքերը այնպե՛ս մրսում են,
Ու մանուկն է լացում շշուկով...*

Նման գեղարվեստական հնարանքների միջոցով բացվում է գրողի ներաշխարհը, ի՛ր իսկ ստեղած աշխարհը, և բանաստեղծն իր ներաշխարհային մթնոլորտն է մատուցում ընթերցողին.

*Աստղաթախիժ օրեր ու գիշերներ տամուկ,
Տխուր շունն է դարձյալ լացում լուսնի ցոլքին...
Իմ հավատը էգ գայլ՝ լույթուն է թախծում
Ու ոռնում է դարձյալ մեռնող պահի դեմքին...*

Լուսին Ղազարյանի բնագրում հետաքրքիր են նաև համեմատությունները: Մի քանի ընդգծումներ ունեմ՝ «Հայացքիդ մեջ մեռնեմ իբրև պարզ երեկո // Ու գիշերում հանց մի աստղ զարթնեմ...», կամ «Քո հոգին հիմա մաքուր է այնքան, // Որքան ապակին իմ լուսամատի»:

Այս համեմատությունները Լուսինն անում է անկաշկանդ և թարմ կառուցումներով՝ պահպանելով դասական տաղաչափական ձևերը: Պետք է նշել, որ չափականության մեջ համեմատություններն ավելի են դժվարացնում գրողի գործը, քան ազատ բանաստեղծության պարագայում: Այս ամենով հանդերձ, Լուսինը շեշտը դնում է նոր համեմատություններ ստեղծելուն, որոնք, անշուշտ, կենսական են: Օրինակ՝



*Երեկոյի հագի շորը ընկավ,
Ու լուսինը բացեց կրծքերը մերկ,
Քո հայացքը դարձավ կարմիր շղարշ
Ու աշխարհը առավ իր խանդի մեջ...*

*Երբ գնացիր, այնժամ ցավը մրսեց,
Ու կարոտը հոսեց քո արյան մեջ,
Լուսնի սիրտը կամաց իմ երազը երգեց,
Արծաթ հույսը խրած խավարի մեջ...*

Այս հատվածում մի քանի բանաստեղծական գյուտեր կան. Լուսնի բաց կրծքերը, կարմիր շղարշով պատված խանդոտ հայացքը, մրսող ցավը, կարոտ-արյունը, խավարում խրված արծաթափայլ հույսը... Այսինքն այն համեմատությունները, որ կատարում է բանաստեղծը, ապրումից են բխում և միևնույն ժամանակ հիմքում ներկա ժամանակի իրերի և մարդու ներդաշնակման ձգտում ունեն:

Հաջորդը յուրահատկությունը Լուսին Ղազարյանի բանաստեղծություններում առկա ներանձնային, մեկուսացված տրամադրության և զգացմունքի արտահայտման հեղեղն: Բանաստեղծությունը՝ հենց ապրումի բանաձևումն է և բանաստեղծը զորում է իր ապրումն իրացնել խոսքի տարածության մեջ ու բանաձևում է հրաշալի ձևով: Օրինակ՝

*Երկինքս հանձնեցիր հողին,
Հինա անաղոթք եմ ու պարտված:*

Ներկա գրականության մեջ շատ գրողներ բանաստեղծության մեջ ուղղակի պատմում են իրենց տեսածն ու զգացածը, այնինչ ապրումը պետք է հստակ՝ երկու տողով կենդանություն հաղորդի բնագրին: Այս զգայական ֆորմաները, որոնք առկա են Լուսին Ղազարյանի բանաստեղծություններում անմիջապես փոխանցվում են ընթերցողին:

Քաղաքացի Լուսին Ղազարյանն իր մի շարք բանաստեղծություններում արտահայտում է իր քաղաքացիական կեցվածքն ու դիրքորոշումը: Բանաստեղծը չի մեկուսանում իր սենյակում ու վերամբարձ, ընդհանրական ու համաժամանակյա իր խոհերը չի



մատուցում ընթերցողին, այլև իր ապրած օրվա գրողն է, ու կարողանում է շոշափել օրվա խնդիրն ու կրակել օրախնդիր թիրախին. «Փողոցը պայքարում էր ձիգով, // Փողոցը մի տեսակ անքուն էր, // Դու՛ ինչո՞ւ լռեցիր անգոր, // Երբ սիրտդ պայծառ ու արթուն էր»:

Իր շուրջը նայելով գրողը հաղթահարեում է սեփական ցավը, տեսնում է հանուրի՝ ընդհանրական խնդիրները՝ արտագաղթ, երկփեղկված հայրենիք, որից ես-ի ցավն ավելի է ահագնանում. «Ծառերի վրա բներ կան դատարկ // Այս կարոտախտը խեղդում է հոգիս, // Ես հավատամքս լաթի փոխարեն // Կապել եմ ձամկիս մասրենու ձյուղից»:

Կենսատարածք-հայրենիքը վտանգված է և կարիքը չկա սին ու փուչ խոսքերով գովերգել նրան: Ուստի բանաստեղծին մնում է վավերագրական գույներով պատկերել այսօրը.

*Երկիրս արդեն երկփեղկված է,
Ամենուր բանտված երազներ են...*

Մի շարք բանաստեղծություններում Լուսին Ղազարյանն կիրառում է երկակի իմաստի հնարավորություն: Երբեմն խոսքը կառուցվում է այնպես, որ նույնարժեք է թե՛ սիրելի էակի և թե՛ հայրենիքի համար: Սա ուշագրավ գեղարվեստական հնարանք է, որը հաջողությամբ իրացրել է բանաստեղծը. «Ով կուգես՝ եղիր... // Մեկ է, իմը չես, // Մեկ է, արյունդ // Ինձ չի սերտելու, // Մեկ է՝ հավատս // Նորից կծախես, // Կգնաս մի թաս // Սիրով երդվելու...», կամ՝

*Մի հազար դար իմն էիր,
Ուղղակի չէի նկատում,
Ուղղակի երթս ցանցառ էր,
Իսկ աչքերդ սիրո պատում.*

Փաստորեն Լուսին Ղազարյանի բանաստեղծությունների հիմնական մոտիվները՝ **մոռացում, ինքնափնտրտուք, քաղաքացիական կեցվածք, խոսքի արժևորում, ներկա դժնի ու ժահրահոտ օրերում՝ սիրո, հավատի, հույսի ու լույսի որոնում** և այլն, այսօրվա մարդու հիմնական մտահոգություններն են:

Վստահ եմ, որ ընթերցողի ներսուկ երկար կհնչի Լուսին Ղազարյանի բանաստեղծությունը:

ԱՐՄԵՆ ԱՎԱՆԵՍՅԱՆ

ԿԻՍԱՏ ԵՐԳ



Նեղացել ես ու հեռացել,
Առանց կովի, առանց խոսքի,
Դու գնացել ու տարել ես
Իմ կարոտի թանձր փոշին:
Ափսոսում ես գուցե նստած՝
Քո սենյակում՝ անլույս, մթին,
Գիտեմ, կարոտում ես հիմա
Իմ աչքերի հեքիաթ լույսին:
Նեղացել ես ու գնացել,
Կհանդիպենք մի օր իրար,
Հին օրերը մենք կհիշենք,
Ու խռովքի պահը խելառ
Ու գեթ մի պահ, մի ակնթարթ
Մենք կնայենք անցած ճամփին,
Կթոթովենք, կթոթափենք
Մեր հոգնության անգույն փոշին:

1996թ. Եղվարդ



ԿԻՍԱՏ Է...

Իմ երգը կհաստ է կարծես
Մի կհաստ բաժակ, կես բաժակ գինի...
Իմ երգը խոսում է ասես,
Չի ուզում, որ թերի լինի:
Բայց չեմ կարող ավարտել երգս
Մինչև որ սրտիս ցավը չմարի,
Ցավն անդադրում տանջում է հոգիս,
Ճչում է, լալիս ու չի մեղմանում,
Աղերսում է ինձ. «Մի նոր երգ գրիր,
Այն կհաստ երգը թող կհաստ լինի»:
Երջանկությունս թերի է կարծես,
Մի կհաստ բաժակ, կես բաժակ գինի...
Երջանկությունս բողոքում է խենթ
Եվ չի կամենում, որ կհաստ լինի:
Իսկ ես հիմարս, հլու իմ բախտին
Չեմ ուզում բախտը իմ կհաստ լինի,
Բայց պատասխանել բողոքին դաժան
Չեմ կարող, կրկնեմ էլի ու էլի:
Ու ես ի՛նչ անեմ, ես ու՛մ բողոքեմ,
Որ անցած ճամփաս կհաստ չլինի:
Իմ անցած ճամփան թերի է կարծես,
Մի կհաստ բաժակ, կես բաժակ գինի...

1996թ. Եղվարդ



Դու մի հասարակ երկրային էակ,
Սովորական մարդ մսից, արյունից,
Ես լոկ Եվայի ժառանգորդը խեղձ
Արմատից նրա դավաձան ու պիղծ,
Բայց իմ հոգու մեջ երազներ կան վառ,
Շուրթերիս վրա՝ երկնային խոսքեր,
Խոսքերիս հուրը թե որ շողշողա,
Կձախրի երկինք՝ աստղերոց էլ վեր,
Դու լոկ երկրային, դու մահկանացու,
Ես՝ չար արմատից սերված մի էակ,
Բայց իմ թևավոր խոսքերով թեկուզ
Սիրո տենչանքը հավերժ կմնա
Կձախրեն վերև խոսքերս հրկեզ,
Թռչունների պես հեռու կզնան,
Գուցե թե մեռնեմ, բայց մարդկանց ի տես
Սիրո երկնքում անմահ կմնամ:
Եվ դու, երկրային բարեգութ ոգի,
Գուցե միակն ես, որ ինձ հասկացար,
Կյանքիդ կարձ ձամփան կանցնես ուրիշի
Երկրային հոգու խեղձ ուղեկցությամբ,
Իսկ ես, թե նույնիսկ երկրային կյանքում
Առանց ուղեկցի քայլեմ իմ ձամփան.
Ինձանից հետո հավերժ կմնա
Երգերիս հյուսած պսակն անթառամ:

1. 05.2000թ. Եղվարդ



ՔՈ ՀՈԳԻՆ

Քո հոգին հիմա մաքուր է այնքան,
Որքան ապակին իմ լուսամատի:
Մաքուր, փայլեցված, փոքրիկ ապակին,
Որի թափանցիկ հնալքի միջից
Ամեն, ամեն օր աշխարհն են տեսնում:
Քո հոգին մաքուր, ինչպես ապակի,
Կոտրված, անգոր փովել է իմ դեմ
Էլ չկա երկդիմի ուրախությունս,
Իմ լուսամտի փոքրիկ ապակին,
Լուռ արտասավել է անձրևից հետո
Մանրիկ ու հպարտ, պաղ արցունքներով:
Ես սրբել եմ այն, փայլեցրել սիրով
Իմ փոքրիկ ու նուրբ, տաքուկ ձեռքերով,
Հետո ապակին ձմեռն է ծեծել
Իր սառն ու անսիրտ, բյուրեղիկներով
Ես ջերմացրել եմ փոքրիկ ապակին
Փափուկ ու քնքուշ թավիշե շնչով:
Քո հոգին մաքուր՝ ինչպես ապակին,
Փշրված, անգոր փովել է իմ դեմ:
Բառեղեն քարի անսիրտ մի հարված,
Ու արհեստական այդ մաքրությունդ,
Ապակու կտրող կտորների պես ես հավաքեցի,
Ու անձայն, անխոս դուրս շարտեցի:

19.10.1997թ. Եղվարդ



ԿՅԱՆՔԸ

Հավերժության մեջ,
Անվերջ շղթայի ուղիղ կենտրոնում,
Կյանքն իր ափերում սեղմում է մարդուն,
Ափի սնոգական, պաղ կնձիռներում
Ճակատագրեր են անդադար բախվում,
Իրար զուգահեռ ճամփաներ խաչվում,
Իսկ անգոր մարդը նման մի փափուկ, խմորագնդի,
Կերպավորվում է շարժումից կյանքի:
Դառնում է գնդակ, ու գլորվում վար,
Հետո ներքևում տափակում մի քիչ
Ու դառնալով օձ՝ սողում է ձղձին
Ու մեկ էլ, հանկարծ, սողացող օձից
Փոխակերպվում է ձախրող արծվի,
Սլանում երկինք, անհունության մեջ
Դառնում է ձնձղուկ:
Հետո նորից դառնում է ձկվող, փափուկ, խմորե
Հասարակ գնդիկ:
Հավերժության մեջ,
Անափ այս կյանքի հսկա ափերում
Ճզմվում է անվերջ դյուրաթեք մարդը,
Սեղմվում, սեղմանում
Ու փորձում կախվել
Անզգա կյանքի կեղծ կնձիռներից:

14.01.1999 թ. Եղվարդ

ՍԵՐ ԹԵՎԵՐՍ



Գամ ու հոգնած քնեմ քո բալկոնում
Ու իմ երթը սուզվող երազ դարձնեմ...
Հայացքիդ մեջ մեռնեմ իբրև պարզ երեկո
Ու գիշերում հանց մի աստղ զարթնեմ...

Ասես կիսահաղորդ բախտին ու աշխարհին
Իմ երկինքը պեղեմ քո օրվա մեջ,
Ու հեռանամ նորից իբրև պարզ երեկո,
Հոգեգալս հեղեմ հայացքիդ մեջ...

Իբրև կորած-մոլոր այս օրերի ցեխում.
Հողս խեղդեմ լճիդ ափերին հեգ,
Իբրև ձաքած կարոտ, իբրև մեռնող երդում,
Քո տնաշեն սիրո պատերի մեջ...

27.05.2016 թ.



Ահա լուսինը
Նրա շուրթերն են
Երկու խենթ աստղեր,
Որ գիշերահամ
Սեր են արարում
Իրար հավելով՝
Աստղահալք եղած
Առավոտի պես...



Երեկոն է երգում աստղերի հետ դյուբիչ,
Քամին վալսն է պարում իր հնարած,
Դու նստել ես անկամ՝ իմ կարոտի շուրթին,
Կարկաստում ես սերը դեռ չմարած...

Քամին մերկ մատներով իր ջութակն է շոյում,
Օրը դնդնում է մի քնշուշ երգ,
Դու սերտում ես անվերջ սիրո խոսք ու երդում,
Քայց հեռանում նորից ու կորչում ես անհետ...

Լույսը բացվեց ահա՝ նոր օրն է արթնանում,
Շաղն է ցանվել մեղմիկ առավուտվա դեմքին:
Դու մոռացած արդեն սիրո խոսք ու երդում,
Հեռանում ես՝ քեզ հետ տանելով իմ հոգին...

1998 թ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՊՐՎԱԾ ՏՈՂ (Արսեն Ավանեսյան) 3

ԿԻՍԱՏ ԵՐԳ

Նեղացել ես ու հեռացել	8
Կիսատ է...	9
Դու մի հասարակ երկրային էակ	10
Քո հոգին	11
Կյանքը	12

ՍԵՐ ԹԵՎԵՐՍ

Գամ ու հոգնած քնեն քո բալկոնում	14
Ահա լուսինը	15
Երեկոն է պարուն աստղերի հետ դյութիչ	16
Կապույտ շաղ է մաղվում իմ կարոտին անծիր	17
Նախածննդյան	18
Մամ	19
Օրվա ձիչեր	20
Յավը ասեղ-ասեղ ցանվեց դեմքիս	21
Ու կան բաներ	22
Ես սպասել եմ	23
Աչքերիս մեջ դարձյալ գարունն է վետվետում	24
Սեր-թևերս	25
Ինձ տեսնելու համար հոգիդ աչքեր չուներ	26
Գիշերը հազաց	27
Լռության ենթատեքստում երկինաստ եմ	28
Ասեմ, որ սիրում եմ	29
Երրորդ տարբերակ չունեմ	30
Հոգուս մեջ լցվեցիր, գարուն	31
Ավազի երգը	32



Հոգու գարնանամուտ	34
Բանականությանն ձայնը հավատացյալ է	35
Անձրևը... ահա...	36

ԳՐԱՎԱԴԻՐՎԱԾ ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ

Տանուլ տվի սերս բախտի խաղատանը	38
Ես լաց չեմ լինում...	39
Անցան օրերը շարականների	40
Գրավադրված երջանկություն	41
Հավատս հայ, ու հոգիս մարդ	42
Այդ ինչո՞ւ օրն անհիծված	43
Ո՛չ լուրջան մեջ, ո՛չ հեռացումի շուրթերին	44
Երկինքս հանձնեցիր հողին	45
Գիշերը կրկնօրինակում է ժամանակի թռիչքը	46
Մարդակարոտ հույսիս սաղմերը քարերին փռեց...	47
Շագանակագույն վարդեր նկարեցի ձերմակ թղթին	48
Ես սերտեցի լուրջան բանաձևը	49
Արցունքի մեջ՝ երանություն	50
Երազները մեռնում են առավոտյան	51
Փողոցը պայքարում էր ձիգով	52
Սրտիցս հոսում էր	53
Արտագաղթ	54
Արտասվի՛ր սիրտ իմ	56

ԻՄ ՀԱՍՅԵՆ՝ ՄՈՌԱՅՈՒՄ

Միթե այդպես էլ	58
Երբ հավատս ցած նետվեց	59
Ապուշին հարիր՝ կիսատ հիշողությամբ	60
Լուսաբնակ աչքեր, հավերժորեն այրող	61
Արև ցանեցի ու չբուսեց	62
Ուզես, թե չուզես գիշերը կգա	63



Իմ հասցեն՝ Մոռացում	64
Երդվիր...	65
Աստղաթախիծ օրեր ու գիշերներ տամուկ	66
Ես հեռանում եմ պահն աղոթելու	67
Այն նստարանը լքել եմ վաղուց	68
Ավագե ժամանակը քիչ-քիչ հատնում է	69
Հիմա, ոչ թե ձամփին	70
Գողացված երկնքիս հիշողության մեջ դու էիր	72
Մի լվա հավատս	73
Էս ինչքան եմ հոգնել	74
Երեկո էր	75
Գունանվագի հպումն է մարում շուրթերին քո թաց	76
Մենակ եմ...	77
Մոռացիր երկինքս, որ քոնն էր	78
Երեկոյի հագին ձերմակ շոր է	79
Մի գնա՝ ասացի	80

ՆՌՆԱՀԱՄ

Ու կյանքը մեզ բաժան-բաժան արած	82
Երբ մեռության դողն է	83
Ով կուզես՝ եղիր...	84
Պոռթկում էր ու պահ էր պարզապես	86
Նոնահամ	87
Մնացիր հուշերիս նկուղում	88
Ես վաղուց կույս չեմ	89
Հացը կոկորդունս պայքարում է	90
Հիշողությանս սավանը	91
Երկիրս արդեն երկփեղկված է	92

ԼՈՒՍԻՆ ՂԱԶԱՐՅԱՆ ԵՍ ՔՈՆԸ ՉԵՂԱ

ЛУСИН КАЗАРЯН Я НЕ СТАЛА ТВОЕЙ

Հրատարակչության տնօրեն՝ Արմինե Քոչարյան
Խմբագիր՝ Արմեն Ավանեսյան

Չափսը՝ 60x84 1/16
Թուղթը՝ օֆսեթ 70գ/մ² 1.5 ծ.կ.
Ծավալը՝ 6.0 տպ. մամուլ
Տպաքանակը՝ 200
Տառատեսակը՝ Ghabuzian Gohar
Գինը պայմանագրային



ИЗДАТЕЛЬСТВО АРМАВ

Ք. Երևան, Շիրազի 24 շ. 48 բն.
հեռ.՝ 34-73-35
Էլ.փոստ՝ armav-hrat@mail.ru

Г. Ереван, ул. Шираза 24 д. 48 кв.
тел.՝ +374-10-34-73-35
Email: armav-hrat@mail.ru

Տպագրությունը՝



«Մագաղաթ» տպագրատուն, Սահմանյան 33
Հեռ.՝ (+374 91) 46 09 72
(+374 93) 20 71 86

Էլ-փոստ՝ magaghatprint@gmail.com